

Վարդանանք

Ընդհանրապես, երբ դպրոցական տարիքի մանուկներու եւ պատանիներու հարցները թէ ի՞նչ սորված են Վարդանանց պատերազմի մասին, անոնց գիտութիւնը կ'ամփոփուի Տղմուտ գետի ափին տեղի ունեցած այդ հայրենասիրական պատերազմին շուրջ, 66,000 կտրիճներով, թշնամիին անհամար բանակին եւ փիղերուն դէմ: Սակայն ուրիշ ի՞նչ պէտք է սորվիլ Վարդանանց պատերազմէն, ի՞նչ հասկնալ, ի՞նչ եզրակացնել:

1- Զիջի՞լ թէ չզիջիլ

Նկարագրի տէր անձ մը պէտք է տեղին հաստատ կենայ իր կեցուածքին վրայ ու որոշէ թէ ամէն գնով իր սկզբունքը եւ գաղափարը պիտի պաշտպանէ: Ահա այդ ըրաւ Վարդան Մամիկոնեան ու մերժեց զիջիլ Քրիստոնէութենէն ըսելով «այս հաւատքէն մեզ ոչ ոք պիտի շեղէ»:

2- Թիւով շատ ըլլալ չի նշանակեր անպայման յաղթական դուրս գալ

Երբեմն մեզի պէս մտածող անձերուն թիւը քիչ կ'ըլլայ, իսկ հակառակորդներունը՝ շատ: Բայց թիւով մեծ խումբը կրնայ նոյնքան զօրաւոր չըլլալ որովհետեւ նոյնքան համոզում չունենար եւ նոյնքան բուռն ձեռով չի հաւատար իր գաղափարին: Ահա այսպէս է որ հայ քրիստոնէաները թէեւ թիւով նուազ էին պարսիկներէն բայց իրենց հաւատքին մէջ աւելի զօրաւոր ըլլալով, մերժեցին ընդունիլ Յազկերտի առաջարկը:

3- Համբերութիւն

Վարդանի եւ իր 1036 ընկերներու նահատակութիւնով սկսած պատերազմը ւարստեցաւ 33 տարիներ ետք իր եղբորորդի Վահան Մամիկոնեանի Յաղթանակով եւ 484 թուականի Նուարսակի մէջ ստորագրուած դաշնագրով: Այս դաշնագրով Պարսիկները կ'ընդունէին Հայոց պայմանները:

- ա. Հայաստանի շնորհել ինքնավարութիւն
- բ. Քրիստոնէական պաշտամունքի ազատութիւն
- գ. Ատրուշաններու վերացում

Ահա այսօր, Վարդանանցէն 1,555 տարիներ ետք, մենք ո՞րքան հաւատարիմ ենք Քաջ Վարդանին եւ մենք ալ մեր կարգին

1. Վարդան Մամիկոնեանի պէս հաստատ կը մնանք մեր Քրիստոնէական սկզբունքներուն
2. Հակառակ անոր որ մեր շուրջը շատ աւելի է թիւը անոնց որոնց հաւատամքը խտտոր է մեր Հայ Քրիստոնէայ սկզբունքներուն, եւ
3. Մենք այս բոլորին կը դիմադրենք համբերութեամբ: եւ մենք ալ Քաջ Վարդանին պէս կ'ըսենք՝



Քանզի
Հայր Մեր
Զսուրբ
Աւետարանն
Գիտենք
եւ
Մայր
ԶԱռաքելական
Եկեղեցի
Կաթողիկէ